«17» նոյեմբերի, 2023թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՋԳՀ-ԾՁԲ-2023/3 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «ԷՍԱՐՓԻ ՇՆԱՅԴԵՐ ԸՆԴ ՓԱՐԹՆԵՐ ԻՆԺԵՆԵՐՅՈՐ-ՔԸՆՍԱԼԹ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (այսուհետ՝ նաև ՀՏԶՀ) կողմից «ՀՀ Լոռու մարզի «Արդվի բնակավայրի ջրամատակարարման համակարգի արտաքին և ներքին ցանցի կառուցում, օրվա կարգավորիչ 2 ջրամբարի կառուցում» և «Մղարթ բնակավայրի ջրամատակարարման համակարգի արտաքին և ներքին ցանցի կառուցում, օրվա կարգավորիչ 2 ջրամբարի և պոմպակայանի կառուցում» ծրագրերի շինարարական աշխատանքների ընթացքում տեխնիկական հսկողության ծառայությունների» ձեռքբերման նպատակով կազմակերպված ՋԳՀ-ԾՁԲ-2023/3 ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) մասնակցել է «ԷՍԱՐՓԻ ՇՆԱՅԴԵՐ ԸՆԴ ՓԱՐԹՆԵՐ ԻՆԺԵՆԵՐՅՈՐ-ՔԸՆՍԱԼԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ նաև Ընկերություն): Հայտերի գնահատման արդյունքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) արձանագրել է, որ Ընկերության կողմից ներկայացված հայտում՝

- Հավելված 1-ում նշված է, որ Ընկերությունը մասնակցում է 1-ին չափաբաժնին, սակայն գնային առաջարկ է ներկայացված նաև 2-րդ չափաբաժնի համար,
- Հավելված 1-ում նշված չէ, թե որ երկրի ռեզիդենտ է հանդիսանում մասնակիցը,
- Հավելված 1.2-ում լրացված չեն 4.2.5 և 4.5. «ա» կետերը,

- Հավելված 1.3-ով ներկայացված պայմանագրի մասով անհրաժեշտ է ներկայացնել համապատասխան հրավերով սահմանված ծառայությունների 80%-ի կատարումը հիմնավորող փաստաթղթերը (օրինակ՝ ակտեր, արձանագրություններ, հաշիվներ), որոնք ներկայացված չեն եղել:

- Հավելված 1.4-ով ներկայացված Ջրամատակարարման և կոյուղու երկու մասնագետների որակավորումը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ ներկայացված չեն եղել ջրամատակարարման և կոյուղու երկու մասնագետների որակավորումները և իրենց ոլորտի շինարարական աշխատանքների կազմակերպան, ղեկավարման կամ տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման առնվազն երեք տարվա փորձը հիմնավորող փաստաթղթերը:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 41-րդ կետի համաձայն՝ 20.09.2023թ-ին էլեկտրոնային եղանակով ծանուցում է ուղարկվել Ընկերությանը՝ արձանագրված անհամապատասխանությունները սահմանված համապատասխան ժամկետում շտկելու մասին: Ընկերությունը ներկայացրել է փաստաթղթեր, որոնց ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Ընկերությունը չի շտկել հրավերի Հավելված 1.4-ով առաջարկված մասնագետների փորձը հիմնավորող փաստաթղթերը, մասնավորապես՝ չի ներկայացրել ջրամատակարարման և կոյուղու երկու մասնագետների որակավորումները և իրենց ոլորտի շինարարական աշխատանքների կազմակերպան, ղեկավարման կամ տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման առնվազն 3 տարվա փորձը հիմնավորող փաստաթղթերը:

Վերոգրյալով պայմանավորված և ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով և Կարգի 42-րդ կետով՝ Հանձնաժողովը որոշել է Ընկերության հայտը գնահատել անբավարար և մերժել այն:

Միևնույն ժամանակ, հարկ է արձանագրել, որ Ընթացակարգը չի նախատեսել հայտի ապահովման ներկայացման պահանջ, ըստ այդմ՝ Ընկերության կողմից հայտի ապահովում չի վճարվել:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով Օրենսդիրը սահմանել է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու դեպքերն, այդ թվում՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում նշված ցուցակը, այդ թվում՝ ռուսերեն, վարում և հրապարակում է լիազորված մարմինը: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Սույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: ...:

Վերոգրյալից հետևում է, որ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պայման որպես՝ Օրենսդիրը պայմանների թվարկմամբ սահմանել է նաև մասնակցի կողմից հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը չվճարելու իրավիճակը:

Սակայն, հարկ է նկատել, որ Հայաստանի Հանրապետության ներպետական օրենսդրությունը թույլատրում է իրականացնելու այնպիսի մրցութային ընթացակարգեր, որոնց պահանջներում բացակայում է հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովումը: Այսինքն, այն դեպքում, երբ մրցութային

ընթացակարգով նախատեսված չէ ապահովումը, ապա մասնակիցը որևէ կերպ չի կարող վճարել նման ապահովման գումարը:

Վերոգրյալ պայմաններում՝ ստացվում է մի իրավիճակ, երբ մասնակիցը կարող է խախտած լինել պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, սակայն նկատի ունենալով այն հանգամանքը, որ տվյալ ընթացակարգով նախատեսված չէ համապատասխան ապահովում, անձը ենթակա չլինի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառման, քանզի առկա չէ դրա երկրորդ պայմանը, այն է՝ մասնակցի կողմից հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը չվճարելու իրավիճակը:

Հարկ է նկատել, որ «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված դրույթն ունի նպատակ՝ ապահովելու մրցույթների անցնցում ընթացքը, այդ թվում՝ որոշակի ժամկետով դրանց մասնակցելու իրավունքից զրկելով այն մասնակիցներին, որոնք ցուցաբերել են անբարեխղճություն մրցութային ընթացակարգերի նկատմամբ, ընդ որում, որպես պատժիչ միջոց Օրենսդիրը նախատեսել է երկու տարբերակ՝

- կա՛մ անձը ներառվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում,
- կա՛մ անձը պետք է վճարի համապատասխան ապահովման գումարը:

Միևնույն ժամանակ, պետք է փաստել, որ քննարկվող նորմի բուն էությունը գնման ընթացակարգերին խախտումներ թույլ տված անձանց նկատմամբ որևէ միջոցով ներազդելն է, հետևաբար այն դեպքում, երբ անձը զրկված է ապահովում վճարելու հնարավորությունից՝ համապատասխան ընթացակարգով ապահովում նախատեսված չլինելու պատճառով, ապա վերջինիս կողմից խախտումներ թույլ տալու հանգամանքը չպետք է զերծ մնա օրենսդրական ներազդման միջոցից, և այդ պայմաններում պետք է գործի դրվի մյուս միջոցը՝ մասնակցին գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելը:

Այլ կերպ ասած, Օրենսդիրը սահմանել է պատասխանատվության տեսակի որոշակի ընտրության հնարավորություն մասնակցի համար՝ վճարելու ապահովման գումարը կամ ներառվելու համապատասխան ցուցակում, ուստիև այս դրույթը՝ ապահովում վճարելու մասով, ենթակա չէ միանշանակ մեկնաբանման այն տեսանկյունից, որ այն հանդիսանում է պայմաններից մեկը՝ համապատասխան ցուցակում ներառվելու համար, այլ՝ մրցույթի ընթացակարգով ապահովում նախատեսված չլինելու դեպքում, դրույթը պետք է մեկնաբանել որպես տվյալ դեպքով ոչ տարածելի՝ ցուցակում ներառելը բացառող հանգամանքի առումով:

Հաջորդիվ, Մրցութային ընթացակարգով ապահովում նախատեսված չլինելու դեպքում համապատասխան խախտումներ թույլ տված անձին քննարկվող ցուցակում չներառելու պարագան նախատեսում է մի այնպիսի իրավիճակ, երբ ի հավասարի չեն դիտվում մրցույթների ընթացակարգերը խախտող մասնակիցները, քանզի այն մասնակիցը, որը նույնությամբ խախտում է ընթացակարգի պահանջը՝ մի դեպքում կարող է չներառվել ցուցակում, քանի որ առկա չէ ապահովումը, իսկ մյուսը՝ ներառվել ցուցակում, քանզի առկա է հայտի ապահովում, որն իր կողմից չի վճարվել: Վերջնանշված իրավիճակը կարող է հանգեցնել որոշակիության և հավասարության խախտման:

Ամբողջ վերոգրյալից ելնելով՝ թեև նկատի ունենալով այն հանգամանքը, որ Ընթացակարգով ապահովում նախատեսված չի եղել և սույն դեպքում առկա չէ հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը վճարելու/չվճարելու հանգամանքը, գտնում եմ, որ առկա է Ընկերությունը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու փաստական և իրավական հիմքերը, մասնավորապես՝ Ընկերության կողմից խախտվել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, ինչը հանգեցրել է գնման գործընթացին հետագա մասնակցության դադարեցմանը, և նշված փաստական հանգամանքը նախատեսված է «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը և նույն հոդվածի 2-րդ մասը՝

ՈՐՈՇԵՑԻ

1. «ԷՍԱՐՓԻ ՇՆԱՅԴԵՐ ԸՆԴ ՓԱՐԹՆԵՐ ԻՆԺԵՆԵՐՅՈՐ-ՔԸՆՍԱԼԹ» ՍՊԸ-ի տվյալները փոխանցել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու գործընթաց սկսելու համար:

2. Սույն որոշումը տրամադրել լիազոր մարմնին և դրա մասին ծանուցել «ԷՍԱՐՓԻ ՇՆԱՅԴԵՐ ԸՆԴ ՓԱՐԹՆԵՐ ԻՆԺԵՆԵՐՅՈՐ-ՔԸՆՍԱԼԹ» ՍՊԸ-ին:

ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ՝ **Ս. ԲԱՂԻՆՅԱՆ**

Հայաստանի Հանրապետություն, 0037, Երևան, Կ. Ուլնեցու 31
Հեռ.՝ (37410) 247 123

K. Ulnetsu st. 31, Yerevan, 0037, Republic of Armenia
Tel.:(37410) 247 123